

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ՍԻՄՈՆ ՖԱՐՄԱՆՅԱՆ

Եղանակագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ՆՈՐՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ԳՅՈՒՏԻ ԱՐՏՈՆԱԳՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ

Հարցադրումը, թե ինչու պետք է նորույթը համարվի գյուտի արտոնագրագունակության պայմաններից մեկը, ունի որոշակի տնտեսական, իրավական և, ինչու չէ, նաև բարոյական հիմնավորումներ: Մասնավորապես, նորույթի արտոնագրագունակության պայման լինելու հիմնավորումն այն է, որ գյուտն արտոնագրային իրավունքով պահպանելով իրավատիրոջն ընձեռում է մենաշնորհ գյուտի օգտագործման կապակցությամբ: Այստեղ հարցը կայանում է նրանում, որ իրավատերերին տրված մենաշնորհը լինի համաշափ մյուս տնտեսական և իրավական սկզբունքներին:

Այս առումով տեսական գրականության մեջ դիպուկ նշվում է, որ այն մենաշնորհը, որը տրվում է արդեն իսկ գոյություն ունեցող գյուտերի նկատմամբ՝ քաղաքացիական շրջանառության մասնակիցներից վերցնելով և տրամադրելով մեկ հոգու, երբեք չի կարող համարվել օրինաշափ, գունեայն տեսանկյունից, որ դրանով անհիմն կերպով սահմանափկում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների արդեն իսկ ունեցած և իրավող իրավունքները: Մյուս կողմից այն մենաշնորհները, որոնք տրվում են քաղաքացիական շրջանառության մասնակիցներին անհայտ ու նոր գյուտերի օգտագործման կապակցությամբ, տրամարսնական և հիմնավորված են այն պատճառաբանությամբ, որ դրանով խթան է ստեղծվում նորանոր տեխնոլոգիական բացահայտումներ կատարելու համար: Վերը նշվածը շատ հաճախ ներկայացվում է որպես դրական և բացասական մենաշնորհներ անվանմամբ: Այսինքն՝ նորույթով պայմանագրված մենաշնորհները համարվում են դրական, իսկ մնացածը՝ բացասական:¹:

Գյուտի նորույթի էությանը անդրադարձել են ինչպես միջազգային պայմանագրերը, այնպես էլ ներական օրենսդրությունները: Մասնավորապես, «Արտոնագրային համագործակցության մասին» պայմանագրի² 33-րդ հոդվածի համաձայն գյուտը համարվում է նոր, եթե չի կանխատեսվում տեխնիկայի՝ նախկինում գյուրթյուն ունեցող նակարդակով: Նման տրամարանությամբ է սահմանում գյուտի նորույթը նաև «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին»

ՀՀ օրենքի³ 11-րդ հոդվածը, ըստ որի՝ գյուտը նոր է, եթե այն տեխնիկայի մակարդակի առանձին մաս չէ: Որպես նշվածի շարունակություն՝ նույն հոդվածը բացահայտում է, թե որն է տեխնիկայի մակարդակը՝ նշելով, որ տեխնիկայի մակարդակը ներառում է մինչև տվյալ գյուտի առաջնության բվական աշխարհում բանավոր կամ գրավոր բացահայտման կամ ցանկացած այլ միջոցով հանրամատչելի դարձած տեխնիկայի տվյալ բնագավառի լուծումների (առանձին մասերի) վերաբերյալ ցանկացած տեղեկություն: Հանրամատչելի են համարվում տեղեկատվության աղբյուրների մեջ բերված տեղեկությունները, որոնց բովանդակությանը ցանկացած անձ կարող է ծանոթանալ անմիջականորեն կամ դրա մասին ծանուցվել օրինական ճանապարհով. ընդ որում, բաց օգտագործմամբ հանրամատչելի դարձած լուծումները ներառվում են տեխնիկայի մակարդակում, եթե այդպիսի օգտագործումն իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում:

Այստեղ հարկ ենք համարում անդրադանալ այն հանգամանքին, որ օրենսդրը հանրամատչելի տեղեկատվությունը բաժանել է երկու տեսակի՝

ա/ տեղեկություններ, որոնց բովանդակությանը ցանկացած անձ կարող է ծանոթանալ անմիջականորեն,

բ/ տեղեկություններ, որոնց մասին ցանկացած անձ կարող է ծանուցվել օրինական ճանապարհով:

Հստ էության, վերը նշված երկու հասկացությունների հիմքում էլ դրված է այն սկզբունքը, որ անձը համապատասխան տեղեկատվությանը ծանութանալու իրավունք և համապատասխան իրավունք իրացնելու հնարավորություն պետք է ունենա: Այս հանգամանքը կարևորվում է նրանով, որ որևէ իրավական ակտով այդպես էլ վերջնականացնելով չի բացահայտվում տեղեկատվության աղբյուր հասկացությունը: Այլ կերպ՝ տեղեկատվության աղբյուրը արտոնագրային իրավունքի շրջանակներում բացահայտելիս պետք է նախ պարզաբանվեն հետևյալ հարցադրումները.

ա/ արդյո՞ք անձն ունեցել է իրավունք ան-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

միջականորեն ծանոթանալու համապատասխան տեղեկատվության աղբյուրում ներկայացված տեղեկությանը,

թ/արդյո՞ք անձն ունեցել է իրական հնարավորություն անմիջականորեն ծանոթանալու համապատասխան տեղեկատվության աղբյուրում ներկայացված տեղեկությանը⁴:

Այսպիսով, վերը նշվածի արդյունքում ակնհայտ է դառնում, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը տեխնիկայի մակարդակը բացահայտում է տեղական և համաշխարհային տեխնիկայի մակարդակների վերաբերյալ առկա տեսական մոտեցումների միասնությամբ: Այլ կերպ՝ տեխնիկայի մակարդակը բաց օգտագործման դեպքում հանրամատչելի է համարվում տեղական մակարդակով, իսկ մնացած մասով՝ համաշխարհային մակարդակով: Նմանատիպ մոտեցումը պայմանավորված է նրանով, որ, եթե բաց օգտագործումը հանրամատչելի համարվեր համաշխարհային մակարդակով, ապա այդ իրավանորմը իրացվելիության առումով խնդիրներ կունենար համապատասխան տեղեկատվական բազայի բացակայության պատճառով:

Այսպիսով, նորույրի մասով իրավահարաբերությունների նշված կանոնակարգումը ենթադրում է եթեր սկզբունքների առակայություն:

1. *հանրամատչելի աղբյուրներում պետք է առկա չլինի նմանատիպ գյուտի վերաբերյալ տեղեկություն, ընդ որում՝ ցանկացած անձան ստեղծագործական բնույթ ունեցող տարրերություն հայտարկող և հայտնաբերված տեխնիկական լուծումների մեջ պետք է մեկնարանվի հօգուտ հայտարկող գյուտի նորույրի,*

2. *տեխնիկայի տվյալ բնագավառի լուծումը պետք է փնտրվի աշխարհում հայտնի դարձած տեխնիկայի տվյալ բնագավառի լուծումների շրջանակներում, ընդ որում՝ նշված շրջանակների մեջ որպես բացառություն չեն ընդգրկվում Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բաց օգտագործմամբ հանրամատչելի դարձած լուծումները,*

3. *նորույրի բացահայտման համար կարող են հաշվի առնվել միայն այն տեղեկությունները, որոնք հայտնի են դարձել մինչև գյուտի առաջնության բվականը:*

Որպես վերը նշված սկզբունքներից բացառություն՝ «Գյուտերի, օգտակար մողելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածը նախատեսում է, որ գյուտի էության բացահայտումը հաշվի չի առնվտում, եթե դա տեղի է ունեցել գյուտի հայտը ներկայացնելուն նախոր-

դող, իսկ ավելի վաղ առաջնություն պահանջելու դեպքում՝ այդ առաջնության թվականին նախորդող տասներկու ամսվա ընթացքում՝ հեղինակի (հայտատուի) կամ գյուտի էության մասին նրանից ուղղակիորեն կամ անուղղակի տեղեկություն ստացած անձի կողմից (այդ հանգամանքը պետք է ապացուցի հայտատուն): Նշված իրավանորմի առկայությունը պայմանավորված է նրանով, որ այս դրույթով ստեղծվում են համապատասխան իրավական մեխանիզմներ գյուտի ապագա իրավատիրոջ համար գյուտի արդյունավետության, առևտրային նշանակության և այլ հատկությունների բացահայտման համար, քանի որ, ըստ էության, գյուտի արտօնագրման նպատակը պետք է կայանա այդ բացահայտումներից կամ այլ կերպ գյուտի տնտեսական նշանակությունից առավել օգտվելու հնարավորությունից⁹:

Այսպիսով, նշվածի համատեքստում գյուտի նորության բացահայտումն իրենից ներկայացնում է որոշակի քայլերի ամբողջություն: Մասնավորապես, գյուտի նորության բացահայտման համար պարզաբանվում են նշված հարցադրումները.

ա/ *ո՞րն է հանդիսանում տեխնիկայի մակարդակ,*

թ/ *ո՞րոնք են համարվում պահպանության ենթակա գյուտի բնորոշող գծերը,*

զ/ *ինչպիսի՞ արդյունք է տվել առաջնության բվականի դրույթամբ պահպանության ենթակա գյուտը բնորոշող գծերի համեմատությունը այլ գյուտերի հետ:*

Տեխնիկայի մակարդակը որոշելու համար իրականացվում է նախ և առաջ տեխնիկայի բնագավառի բացահայտումը: Նախ որոշվում է, թե գյուտը տեխնիկայի որ բնագավառին է վերաբերում, այնուհետև տվյալ բնագավառում փնտրվում են հայտարկվող գյուտին ամենամոտ գյուտերը: Կամ, այլ կերպ, բացահայտվում է՝ հայտում նշված տեխնիկական խնդիրին որևէ լուծում աղբյունաբերության մեջ տրվել է, իսկ եթե տրվել է, ապա ինչպես: Նշվածի արդյունքում էլ բացահայտվում է տեխնիկայի մակարդակը: Ընդ որում՝ տեխնիկայի մակարդակը բացահայտելիս հաշվի են առնվում այն բոլոր տեղեկությունները, որոնք տեսականորեն կարող են հասանելի լինել հանրությանը անկախ նրանից՝ այդ տեղեկատվությանը որևէ անձամբ ծանոթացե՞լ է, թե ոչ¹¹: Տեսության մեջ հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե տեխնիկայի մակարդակը բացահայտելիս պետք է հաշվի առնվել գաղտնիք հանդիսացող և հանրությանը հայտնի չդարձված տեղեկությունները¹²: Մեր կարծիքով, նմանատիպ իրավիճակներում

ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

պետք է վերջիններս և հաշվի առնվեն տեխնիկայի մակարդակը բացահայտելիս, քանի որ այստեղ գործում է զյուտի օրյեկտիվութեն նորույթ լինելու սկզբունքը: Ավելին, եթե դեռևս չիրապարակված հայտերը և հաշվի են առնվում տեխնիկայի մակարդակը բացահայտելիս, ապա նմանատիպ մուտքում պետք է ցուցաբերվի նաև մնացած գաղտնիք հանդիսացող և տեխնիկայի մակարդակը կանխորշող տեղեկատվության նկատմամբ:

Այնուհետև պահպանության ենթակա գյուտը բնորոշող գծերը բացահայտելու համար համապատասխան իրավասու մարմնը բացահայտում է, թե որ հատկանիշը կամ դրանց խումբն է բավարար գյուտի շնորհիվ ստացվող տեխնիկական արդյունքին համեմ համար: Հենց այդ հատկանիշներն ել հանդիսանում են հայտարկվող գյուտի բնորոշող գծերը: Ընդ որում՝ այս առումով Եվրոպական փորձը հուշում է, որ համապատասխան հատկանիշները պետք է բացահայտվեն տվյալ բնագավառի մասնագետի տեսանկյունից¹³: Այնպիսի մասնագետի տեսանկյունից, որն ի վիճակի է բացահայտել հայտի համապատասխան փաստաթղթերը և վեր հանել խնդրի լուծումն ապահովող գյուտի հատկանիշները¹⁴:

Գյուտի նորույթի բացահայտման երրորդ և վերջին փուլում համապատասխան իրավասու մարմնը պարզում է՝ արդյոք վերը նշված հայ-

տարկվող գյուտի հատկանիշները որևէ բանով տարբերվում են տեխնիկայի մակարդակում առկա նմանակ գյուտերից կամ գոյություն ունեն արդյոք այդ հատկանիշներին նման հատկանիշներ տեխնիկայի մակարդակում: Այս տրամաբանական գործնթացի արդյունքում էլ հենց բացահայտվում է գյուտի նորույթը: Ընդ որում՝ պետք է նշել, որ գյուտի նորույթի բացահայտման ժամանակ բավարար է նույնիսկ գյուտի բնորոշ գծերի յուրաքանչյուր չնշին տարբերությունը նմանակ գյուտերի հատկանիշներից:

Այսպիսով, նշվածի արդյունքում կարող ենք հանգել այն եզրահանգմանը, որ գյուտի հատկանիշներից նորույթը օրյեկտիվ իրականության մեջ գոյություն ունեցող, նորանոր տեխնոլոգիական բացահայտումներ կատարելուն խթանող այնպիսի երևույթ է, որը պայմանավորված է գյուտով ապահովող տեխնիկական արդյունքի հատկանիշների առանձնահատկություններից: Հետևաբար գյուտի նորույթը բացահայտելիս յուրաքանչյուր դեպքում որպես նշանակետ պետք է ընդունվեն, թե հայտարկող գյուտով ինչպիսի խթան է ստեղծվում տեխնոլոգիական նորարարությունների համար և բնարկվող նորույթը գործունեության հատկանիշները, որոնք պահպանում են՝ ինդրի լուծումն ինչպիսի առանձնահատկություններ ունի:

¹ Sté Catherine Colston. Principles of intellectual property law (Principles of law series) – Law and legislation – Great Britain. էջ 86:

² Sté ՀՀԳ Տ 1994/6:

³ Sté ՀՀՊՏ 2008.07.09/42(632) Հոդվ. 715:

⁴ Sté Հարցին նման լուծում տալը բխում է նաև միջազգային պրակտիկայից: Sté Austria. Supreme Patent and Trademark Chamber of 28 April 2010 (OBP 2/09) (http://archive.epo.org/epo/pubs/oj012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ), Belgium. Brussels Court of First Instance of 19 December 2008 – Lefebvre v Bogaert, France. Court of Cassation of 7 October 2008 (07-17518) – SMCA v SAT(http://archive.epo.org/epo/pubs/oj012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ), Netherlands. The Hague Court of Appeal (Gerechtshof te 's Gravenhage) of 13 July 2010 – Clyde Bergemann v Magaldi(http://archive.epo.org/epo/pubs/oj012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ):

⁵ Sté Ժանով Ա. Ա., Մատվեև Գ. Ա. Տենդենции կ ստուգական պատենտությունների պահպանության մասին մասին լուծում տալը բխում է նաև միջազգային պրակտիկայից: Sté Հարցին նման լուծում տալը բխում է նաև միջազգային պրակտիկայից: Sté Ասահի և Գեներալ Էլեկտրիկ ընկերությունը պահպանում է նորույթը առանձնահատկություններում:

⁶ Sté Իտալիա. Florence District Court of 29 December 2005 (17178/2005) – Barbieri v Bacci (http://archive.epo.org/epo/pubs/oj012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ):

⁷ Sté Ֆրանս. Paris District Court of 13 October 2006 (04/07666) – Asahi v General Electric (http://archive.epo.org/epo/pubs/oj012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ):

⁸ Sté Մերց Պ. Բ., Սերգեև Ա. Պ. Ինտելլեկտուալ նորույթը. – Մոսկվա, 2000, Ս. 111.

⁹ Sté Ա. Պ. Սերգեև. Պահպանություն և ինտելլեկտուալ նորույթը. – Մոսկվա, 2000, Ս. 421-422.

¹⁰ Sté Catherine Colston. Principles of intellectual property law (Principles of law series) – Law and legislation – Great Britain, 1999, էջ 87:

¹¹ Sté Եվրոպական արտոնագրային ընկերության շրջանակներում ընդունված T 877/90 (http://www.epo.org/law-practice/legal-texts/html/caselaw/2010/e/clr_i_c_1_8_8_c.htm, 2013 թ. հունվարի 4-ի դրույթամբ), ինչպես նաև T381/87 (<http://www.epo.org/law-practice/case-law-appeals/recent/t090834eu1.html>, 2013 թ. հունվարի 4-ի դրույթամբ) ակտերը:

¹² Sté Catherine Seville. EU Intellectual Property Law and Policy, 2009, էջ 108:

¹³ Sté Graham Dutfield, Uma Suthersanen. Global Intellectual property law, Great Britain, 2008, էջ 120:

¹⁴ Sté Եվրոպական արտոնագրային ընկերության շրջանակներում ընդունված T7/86 (<http://www.epo.org/law-prac>

ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

tic/case-law-appeals/recent/t860007ex1.html, 2012 թ. դեկտեմբերի 12-ի դրույթամբ), T 77/87 (<http://www.epo.org/law-practice/case-law-appeals/recent/t870077ex1.html>, 2012 դեկտեմբերի 12-ի դրույթամբ) և այլ ակտեր:

Օգտագործված գրականության ցանկ

Ա) Տեսական գրականություն.

1. Жаанов А. А., Матвеев Г. А. Тенденции к унификации патентного права в зарубежных странах. Издательство стандартов. Москва, 1974, 200 стр..
2. Мегре П. Б., Сергеев А. П. Интеллектуальная собственность. – Москва, 2000, 400 стр..
3. Сергеев А. П. Право интеллектуальной собственности в Российской Федерации. Учебник. Издание второе, переработанное и дополненное. Москва, 2000, 752 стр..
4. Catherine Colston. Principles of intellectual property law (Principles of law series) – Law and legislation – Great Britain, 1999, 482 էջ:
5. Catherine Seville. EU Intellectual Property Law and Policy, Great Britain, 2009, 432 էջ:
6. Graham Duffield, Uma Suthersanen. Global Intellectual property law, Great Britain, 2008, 370 էջ:

Բ) Իրավական ակտեր.

- 1.ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 1998 թ. մայիսի 5-ին:
2. «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին»ՀՀ օրենք, ընդունվել է 2008 թ. հունիսի 10-ին:
- 3.ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 2009 թ. մարտի 25-ի «Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի հայտի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգը հաստատելու մասին»թիվ 206-Ն հրաման:
4. 1970 թ. հունիսի 19-ին Վաշինգտոնում ստորագրված «Արտոնագրային կոռպորացիայի մասին» պայմանագիր:
5. 1994 թ. սեպտեմբերի 9-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական արտոնագրային կոնվենցիա»:

Գ) Օտարեկրյա իրավակիրառ պրակտիկա.

1. Եվրոպական արտոնագրային ընկերության շրջանակներում ընդունված T7/86 ակտ (<http://www.epo.org/law-practice/case-law-appeals/recent/t860007ex1.html>, 2012 թ. դեկտեմբերի 12-ի դրույթամբ):
2. Եվրոպական արտոնագրային ընկերության շրջանակներում ընդունված T 77/87 ակտ (<http://www.epo.org/law-practice/case-law-appeals/recent/t870077ex1.html>, 2012 դեկտեմբերի 12-ի դրույթամբ):
3. Եվրոպական արտոնագրային ընկերության շրջանակներում ընդունված T 381/87 ակտ (<http://www.epo.org/law-practice/case-law-appeals/recent/t090834eu1.html>, 2013 թ. հունվարի 4-ի դրույթամբ):
4. Եվրոպական արտոնագրային ընկերության շրջանակներում ընդունված T 877/90 ակտ (http://www.epo.org/law-practice/legal-texts/html/caselaw/2010/e/clr_i_c_1_8_8_e.htm, 2013 թ. հունվարի 4-ի դրույթամբ):
5. Austria. Supreme Patent and Trademark Chamber of 28 April 2010 (OBр 2/09) (http://archive.epo.org/epo/pubs/0j012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ):
6. Belgium. Brussels Court of First Instance of 19 December 2008 – Lefebvre v Bogaert, France. Court of Cassation of 7 October 2008 (07-17518) – SMCA v SAT (http://archive.epo.org/epo/pubs/0j012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ):
7. France. Court of Cassation of 10 November 2009 (08-18218) – Syrdrec v Groupement Carte Bleue (http://archive.epo.org/epo/pubs/0j012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ):
8. France. Paris District Court of 13 October 2006 (04/07666) – Asahi v General Electric (http://archive.epo.org/epo/pubs/0j012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ):
9. Italy. Florence District Court of 29 December 2005 (17178/2005) – Barbieri v Bacci (http://archive.epo.org/epo/pubs/0j012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ):
10. Netherlands. The Hague Court of Appeal (Gerechtshof te 's Gravenhage) of 13 July 2010 – Clyde Bergemann v Magaldi (http://archive.epo.org/epo/pubs/0j012/02_12/12_spe0.pdf, 2012 թ. մայիսի 20-ի դրույթամբ):

РЕЗЮМЕ

Новизна как условие патентоспособности изобретения

Новизна изобретения является стимулом для совершения технологических открытий. Новизна обусловлена особенностями технических характеристик изобретения. При раскрытии новизны устанавливается какой стимул создается для технологических инноваций. Исходя из вышесказанного, монополии использования изобретением бывают отрицательными и положительными.

SUMMARY

Novelty as a condition of patentability

The novelty of the invention provides stimulus for the accomplishment of technological discoveries. The novelty depends on the features of the technical characteristics of the invention. In disclosing the novelty it is determined what stimulus is set for technological innovations. Based on the abovementioned, the monopoly of using the invention, can be negative or positive.